RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

9 ամիսներ 2023

Բովանդակություն

- Ներածություն 3
- Զուտ շահույթ 4
- Ընդհանուր ակտիվներ 5
- Վարկային ներդրումներ 7
- Ընդհանուր պարտավորություններ 9
- Ավանդներ և պարտատոմսեր 10
- Ընդհանուր կապիտալ 12

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել 2023 թ. առաջին 9 ամիսների Հայաստանի բանկային համակարգի հիմնական ֆինանսական ցուցանիշները:

Վերլուծված ցուցանիշներն են

- Զուտ շահույթ, ընդհանուր ակտիվները, պարտավորությունները և կապիտալը
- Վարկային ներդրումները
- Հաճախորդներից ներգրավված ֆինանսական միջոցները, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները

Հետազոտությունը կատարվել է Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Զուտ շահույթ

- 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Հայաստանում գործող բանկերի ընդհանուր զուտ շահույթը կազմում է գրեթե **215 մլրդ ՀՀ դրամ,** ինչը **21 մլրդ ՀՀ դրամով** կամ **11%**-ով ավել է քան 2022 թվականի նույն ժամանակահատվածում գրանցած արդյունքը:

- 2023 թվականի 9 ամիսների ընթացքում, բոլոր ՀՀ բանկերը եղել են շահութաբեր:



Ընդհանուր ակտիվներ

- Բանկային համակարգի ընդհանուր ակտիվները 2023 թվականի 9 ամիսների ընթացքում աճել են ընդամենը **4.5%**-ով:

- Առ **30.09.2023**, ընդհանուր ակտիվները կազմել են **8.775 մլրդ ՀՀ դրամ**:

Բանկերի ընդհանուր ակտիվները - 30.09.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր ակտիվներ

- Ամենախոշոր **5** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, ԱԿԲԱ ԲԱՆԿ և Ինեկոբանկ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **56.4%:**
- Ամենախոշոր **3** բանկերի *(Արդշինբանկ, Ամերիաբանկ և ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ)* ընդհանուր ակտիվները կազմում են բանկային համակարգի ընդհանուր ակտիվների **41.8%:**
- Արդշինբանկ-ի մասնաբաժինը ամենամեծն է՝ **16.9%:**

Ընդհանուր ակտիվների կենտրոնացումը ըստ բանկերի - 30.09.23



Ընդհանուր վարկային պորտֆել

- Բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելը 2023 թվականի 9 ամիսների ընթացքում աճել է **13%**-ով:
- Առ **30.09.2023** ընդհանուր վարկային պորտֆելը հավասար է **4.722 մլրդ ՀՀ դրամ** և կազմում է ընդհանուր ակտիվների **54%:**
- Նշված ընդհանուր վարկային պորտֆելը ներառում է մանրածախ և կորպորատիվ վարկեր:

Բանկերի վարկային պորտֆելի դինամիկան - 9 ամիսներ 2023 թ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր վարկային պորտֆել

•- Ամենախոշոր **5** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ, ԱԿԲԱ ԲԱՆԿ, ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ, եւ Ինեկոբանկ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **60.3%:**

•- Ամենախոշոր **3** բանկերի (Ամերիաբանկ, Արդշինբանկ եւ ԱԿԲԱ ԲԱՆԿ) ընդհանուր վարկային պորտֆելները կազմում են բանկային համակարգի ընդհանուր վարկային պորտֆելի **43.3%:**

•- Ամերիաբանկի մասնաբաժինը ամենամեծն է՝ **19.1%:**

Ընդհանուր վարկային պորտֆելի կենտրոնացումը ըստ բանկերի - 30.09.23



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները 2023 թվականի 9 ամիսների ընթացքում աճել են **3%-ով:**

- Առ **30.09.2023**, ընդհանուր պարտավորությունները կազմել են **7,288 մլրդ ՀՀ:**



Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ

- Բանկային համակարգի **ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները 2023 թվականի 9 ամիսների ընթացքում աճել են **5.1%-ով:**
- Առ **30.09.2023, ընդհանուր** ընթացիկ հաշիվների մնացորդները և ժամկետային ավանդները հավասար են **5.302 մլրդ ՀՀ դրամ** և կազմում են ընդհանուր պարտավորությունների **73%:**



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2023 թվականի 9 ամիսների ընթացքում **30 մլրդ ՀՀ դրամով,** կամ **8.6%**-ով:

- Առ **30.09.2023**, բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը կազմում է շուրջ **375 մլրդ ՀՀ դրամ**:

- **18** գործող բանկերից պարտատոմսեր թողարկել են **13**-ը:

Բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր - 30.09.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալը աճել է **170 մլրդ ՀՀ դրամով**, կամ **13%** ու կազմել **1,487 մլրդ ՀՀ դրամ**:
- 2023 թվականի 9 ամիսների ընթացքում Հայաստանի բանկային համակարգի կուտակված շահույթը/վնասը (ներառյալ գլխավոր պահուստը) աճել է **136 մլրդ ՀՀ դրամով**, կամ **23%,** կազմելով **718 մլրդ ՀՀ դրամ**:
- 2023 թվականի 9 ամիսների ընթացքում շահաբաժին (դիվիդենտ) հայտարարագրել են **10** բանկ՝ ընդհանուր գումարով **81 մլրդ ՀՀ դրամ.**

1. *Արդշինբանկ* ***18.1 մլրդ ՀՀ դրամ,***
2. *Ամերիաբանկ* ***– 17.7 մլրդ ՀՀ դրամ,***
3. *Ինեկոբանկ* ***– 13 մլրդ ՀՀ դրամ,***
4. *ԱյԴի Բանկ* ***– 8.25 մլրդ ՀՀ դրամ,***
5. *Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան* ***– 5.8 մլրդ ՀՀ դրամ,***
6. *Արարատ Բանկ* ***– 5 մլրդ ՀՀ դրամ,***
7. *Կոնվերս Բանկ* ***– 4.4 մլրդ ՀՀ դրամ,***
8. *ԱԿԲԱ ԲԱՆԿ* ***– 4.4 մլրդ ՀՀ դրամ,***
9. *Էվոկաբանկ* ***– 3.4 մլրդ ՀՀ դրամ,***
10. *ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ* ***–1 մլրդ ՀՀ դրամ,***

Բանկերի ընդհանուր կապիտալի համեմատություն - 30.09.23 և 31.12.22 (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր կապիտալ

- Առ 30.09.2023թ. **կանոնադրական կապիտալը** (ներառյալ էմիսիոն եկամուտը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **50%**-ը և հավասար է **735 մլրդ ՀՀ դրամ**:
- Առ 30.09.2023թ. **կուտակված շահույթը** (ներառյալ գլխավոր պահուստը) կազմում է Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **48%**-ը և հավասար է **718 մլրդ ՀՀ դրամ:**
- Առ 30.09.2023թ. **վերագնահատման պահուստները** կազմում են Հայաստանի բանկային համակարգի ընդհանուր կապիտալի **2%**-ը և հավասար են **34 մլրդ ՀՀ դրամ:**

Ընդհանուր կապիտալի տարրերը առ 30.09.2023



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am